ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

# ՈՐՈՇՈՒՄ
## Հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույց պահանջելու մասին

ԵԴ2/3978/02/24 ք. Երևան
11 հունիսի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ դատարան), նախագահությամբ դատավոր Անուշավան Մուշեղյանի, ուսումնասիրելով «Գինգկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը.

## ՊԱՐԶԵՑ

1. Ընկերության ներկայացուցիչը 2024 թվականի մայիսի 23-ին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Պատասխանողի՝ խնդրելով անվավեր ճանաչել «Գինգկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետի՝ 23.04.2024 թվականի թիվ 1484-Ա որոշումը:

Հայցադիմումը դատավոր Ա. Մուշեղյանին է մակագրվել 2024 թվականի մայիսի 23-ին:
Դատարանի դատավոր Ա. Մուշեղյանիս կողմից 29.05.2024 թվականին կայացվել է հայցադիմումը վերադարձնելու մասն որոշում:
Ընկերության ներկայացուցչի կողմից եռօրյա ժամկետում հայցադիմումը կրկին ներկայացվել է Դատարան:
Հայցադիմումը դատավոր Ա. Մուշեղյանին է մակագրվել 2024 թվականի հունիսի 6-ին:

2024 թվականի հունիսի 11-ի փոխարեն նույն թվականի հունիսի 12-ին սույն որոշման հրապարակումը պայմանավորված է եղել «Էլեկտրոնային դատավարություն» համակարգի խափանմամբ:
2. Օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը վարույթ է ընդունում ներկայացված հայցադիմումը, եթե առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցադիմումի թերությունները վերացնելու համար առաջին ատյանի դատարանը տրամադրում է եռօրյա ժամկետ՝ սկսած հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումն ստանալու պահից, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ, 10-12-րդ և 14-րդ կետերով սահմանված դեպքերի: Եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը: (...):
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:
Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը արձանագրում է, որ Հայցվորի կողմից հայցադիմումի վերադարձի համար հիմք հանդիսացած թերությունը վերացվել է, իսկ հայցադիմումը Դատարան է ներկայացվել այն կրկին ներկայացվելու համար օրենքով սահմանված ժամկետում: Միաժամանակ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-122-րդ հոդվածներին և 27.2-րդ գլխով նախատեսված պահանջներին համապատասխան:
Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր, ուստի այն ենթակա է վարույթ ընդունման:
3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:
Նկատի ունենալով, որ ներկայացվել է գնումների հետ կապված վեճերով վարույթի կարգով քննության ենթակա հայցադիմում, որը Դատարանի որոշմամբ ենթակա է վարույթ ընդունման, ուստի անհրաժեշտ է պատասխանող Երևանի քաղաքապետարան ՀՄ-ից պահանջել ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/92 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 17-րդ, 125-րդ, 127-րդ, 188-րդ, 199-200-րդ, 234.5-րդ, 234.6-րդ և 234.9-րդ հոդվածներով՝ Դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. «Գինգկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի ՀՄ՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

1.1. Այն համարել դատարան ներկայացված սկզբնապես ներկայացման օրը:
2. Գործը քննել գրավոր ընթացակարգով:
3. Երևանի քաղաքապետարան ՀՄ-ից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3.1. Վերը նշված պահանջները պատասխանողի կողմից ենթակա է կատարման սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
Կողմին պարզաբանել.
- Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
- Վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.
- Պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:
- Հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
4. Գործի քննության արդյունքում կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024 թվականի հուլիսի 24-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց և «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:
Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

**Դատավոր՝ Անուշավան Մուշեղյան**

Digitally signed by MUSHEGHYAN ANUSHAVAN 1808870395
Date: 2024.06.12 16:54:08 AMT

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*